ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 11 » ապրիլի 2024թ. № **45 –Ա**

ՄԵԾ ՊԱՐՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «ՄԱՐ-ՄՈՍ» ՍՊԸ-ի կողմից 27.03.2024թ. տրամադրված «Շարժական գույքի գնահատման հաշվետվությունը», որի համաձայն գույքի շուկայական արժեքը կազմում է 2 200 000 ՀՀ դրամ, հաշվի առնելով, որ Մեծ Պարնիի գյուղապետարանի նախկին վարչական շենքը ոչ հիմնական փայտյա շինություն է, որը ներկայումս չի շահագործվում համայնքային կարիքների համար և տրամադրված չէ որևէ անձի օգտագործման նպատակով, շինությունն առանց լրացուցիչ ծախսերի հնարավոր չէ շահագործել, այն հրդեհավտանգ է, կարող է ցանկացած ժամանակ հրդեհվել և վնաս պատճառել համայնքին, իսկ դրա օտարումից համայնքի բյուջե կմուտքագրվեն ֆինանսական միջոցներ՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Մեծ Պարնիի գյուղապետարանի նախկին վարչական շենքը աճուրդով օտարելուն՝ ապամոնտաժելու և հողատարածքը ազատելու պայմանով:

2. Գույքի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 2 200 000 ՀՀ դրամ:

ԿՈՂՄ (10) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (4)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ	ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ	ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ	ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ
ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ	ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ	
ԿԱՐԻՆԵ ԴԻԼԱՔՅԱՆ	
ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ	

ԿՈՂՄ (10) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (4)

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. ապրիլի 11
ք. Սպիտակ